

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

«Լոռու մարզում Համահայկական խաղերի կազմակերպչական աշխատանքներին նվիրված խորհրդակցություն «Լոռու մարզպետի մոտ

10.06.2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Տ.Բաղդասյանը, Ա.Դարբինյանը, Վ. Ասատրյանը - մարզպետի տեղակալներ
Ա. Մանուկյանը – մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Մ.Սայադյանը, Դ. Մանուչարյանը, Ա. Ջանազյանը, Ս. Խալաթյանը, Ա. Ռևազյանը, Հ. Մկրտչյանը – ԼՄ ստորաբաժանումների ղեկավարներ
Տ. Էվինյանը, Ա. Սարգսյանը – մարզպետի օգնականներ
Ս. Դարբինյանը, Մ. Ղարաքեշիշյանը, Գ.Սահակյանը, Ա. Վարոսյանը Է.
Արշակյանը – ԼՄ քաղաքային համայնքների ղեկավարներ

Օրակարգում՝

1. Միջոցառումների ծրագրերի ներկայացում
2. Կազմակերպչական աշխատանքների քննարկում
3. Առաջարկությունների ներկայացում

Քննարկվեց՝

1. Համահայկական խաղերին Լոռու մարզի ներկայացուցիչների համար միասնական համազգեստի պատվիրման հարցը
2. Ջահակիրների ընտրության հարցը

Հանձնարարվեց՝

1. Կատարել ջահակիրների ընտրություն՝ տալ մեկ ավագ և մեկ երիտասարդ սերնդի սպորտի ներկայացուցիչներ
2. Կազմակերպել ջահի փոխանցման հանդիսավոր արարողություն
3. Մարզիկների համար պատվիրել միանման մարզական հագուստ ,ԼՄՍԵ,, հիմնադրամի միջոցների հաշվին՝ համապատասխան գրությամբ
4. Կազմակերպել մարզիկների հյուրանոցային տեղաբաշխումը
5. Վերահսկել մարզադաշտերի նախապատրաստական աշխատանքների իրականացումը
6. Վերահսկել ներհամայնքային ճամփեզրերի մաքրման և ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացման ընթացքը

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Տ. Էվինյան
0322 /2-35-68/